ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 17.04.2026թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2026/10 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱԱՌԱՋԱՏԱՐ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՈՐՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **«21» օգոստոսի 2026թ.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆայրբրդ ԷՅԱՅ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Եսայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.07.2026թ. թիվ 1041-Ն որոշումը և Կողմերի միջև 17.04.2026թ. կնքված N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2026/10 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 16.2.1. կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան, գինը և վճարման պայմանները

Կողմերը փոխադարձ համաձայնվեցին.

1.1 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.2 Սահմանել, որ սույն համաձայնագրի գինը 2026 թվականի համար կազմում է 957,876,400 (ինը հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝ վճարումներն իրականացվելու են Պայմանագրով սահմանված կարգով՝ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011063006 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան (ստորագրություն)	«Ֆայրբրդ ԷՅԱՅ» ՍՊԸ Ք. Երևան 0014, Ազատության պողոտա 24/1, Հ/Հ 2480901824810003 ՀՎՀՀ 08303908 Տնօրեն՝ Ալեքսանդր Եսայան (ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
N ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2026/10 գնման պայմանագրի
«21» 08 2026թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	98391800/1	Առաջատար գրաֆիկական պրոցեսորների հզորացման ծառայություններ										957,876,400	957,876,400	957,876,400	**957,876,400**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011063006 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան (ստորագրություն)	«Ֆայրբրդ ԷՅԱՅ» ՍՊԸ Ք. Երևան 0014, Ազատության պողոտա 24/1, Հ/Հ 2480901824810003 ՀՎՀՀ 08303908 Տնօրեն՝ Ալեքսանդր Եսայան (ստորագրություն)